

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
հանրապետական փուլ
8-րդ դասարան - 120 րոպե

N 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞ր քաղաքում է հիմնադրվել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը. (0,5 միավոր)
 - 1) Ադանա
 - 2) Սիս
 - 3) Անթիլիաս
 - 4) Բեյրութ

2. Ո՞ր առաքյալի համար բացեցին Մարիամ Աստվածածնի գերեզմանը, որը գտնվում էր քարայրում. (0,5 միավոր)
 - 1) Հովհաննես
 - 2) Պետրոս
 - 3) Թադեոս
 - 4) Բարդուղիմեոս

3. Հայաստանի ո՞ր գավառում է Բարդուղիմեոս առաքյալը հիմնադրում եկեղեցի. (0,5 միավոր)
 - 1) Գողթն
 - 2) Արտազ
 - 3) Հեր
 - 4) Զարևանդ

4. Ո՞վ է Անիում կառուցում Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցին. (0,5 միավոր)
 - 1) Գագիկ I-ը
 - 2) Կատրամիդե թագուհին
 - 3) Սարգիս Սևանցին
 - 4) Խաչիկ Արշարունին

N 5-9

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

5. Խաչի ճանապարհին Հիսուսին օգնելու համար զինվորները բռնեցին _____ անունով մի մարդու, որ օգնի Նրան: (1միավոր)

6. Եկեղեցում որոշակի կանոնակարգով կատարվող արարողությունների ամբողջությունը կոչվում է _____: (1միավոր)

7. Պապ թագավորի կարգադրությամբ կաթողիկոս ձեռնադրվելու համար Հուսիկը Կեսարիա չի մեկնում և ձեռնադրվում է _____ քաղաքում:

(1 միավոր)

8. Նարեկավանքը գտնվում է պատմական Հայաստանի _____ նահանգում:

(1 միավոր)

9. Բարսեղ Բ Անեցու մահվանից հետո Զաքարյան Հայաստանում գործող եկեղեցական թեմերը ենթարկվեցին _____ ի Հայոց կաթողիկոսությանը: (1 միավոր)

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

10. Բառերը համապատասխանեցնել բացատրություններին.

(1 միավոր)

1. Փարիսեցի
2. Մաքսավոր
3. Կուսակալ
4. Վարդապետ

- ա. Կառավարիչ
- բ. Ուսուցիչ
- գ. Կայսր
- դ. Իսրայելում կրոնական խմբավորման անդամ
- ե. Հարկահավաք

1	
2	
3	
4	

11. Իրադարձությունները համապատասխանեցնել թվականներին.

(1 միավոր)

1. Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը ա. 298 թ.
 2. Տրդատ Մեծի վերստին գահ բարձրանալը բ. 312 թ.
 3. Հայաստանի բաժանումը Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև գ. 1149 թ.
 4. Հայրապետական աթոռի Հեռակլա տեղափոխումը դ. 1178 թ.
 5. Նարեկավանքի վերջնական ավերումը ե. 1639 թ.
- գ. 1896 թ.

1	
2	
3	
4	
5	

N12-13

Աշխատանք սկզբնադրյալով՝ կազմված 2 հարցից

12. «Երբ բոլոր մարդիկ ու թագավորը իջնում էին այնտեղ՝ գետի ջրերի մեջ մկրտվելու, Աստուծուց սքանչելի հրաշք երևաց, քանզի գետի ջրերը կանգնելով ետ դարձան»:

1. Ո՞ր գետի մասին է խոսքը:

(1 միավոր)

2. Ու՞մ աշխատությունից է մեջբերումը:

(1 միավոր)

13. Արքայի սրից խաչ են պատրաստում, որի վրա գրում են. «Սպանման գործի արքայական այս զենքը Կյանքի Արքայի Քրիստոսի խաչին նվիրյալ լինի, որով մեզ փրկեց հավիտենական մահից»:

1. Ու՛մ աշխատությունից է մեջբերումը: (1 միավոր)

2. Ո՞ր արքայի սրի մասին է խոսքը: (1 միավոր)

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանք:

N 14

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ու՛մ անունն է ավելորդ: (0,5 միավոր)

Մխիթար Գոշ, Մաղաքիա Օրմանյան, Կյուրեղ Քիպարյան, Վարդան Արևելցի, Ստեփանոս Օրբելյան:

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ու՛մ անունն է ավելորդ: (0,5 միավոր)

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Հովհաննես Դրասխանակերտցի, Վարդան Արևելցի, Հակոբ Մեղապարտ, Կիրակոս Գանձակեցի:

N 15

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

- ա. Կամրջաձորի վանք, Հոռոմոսի վանք, Հնձուց վանք
- բ. Կամրջաձորի վանք, Հոռոմոսի վանք, Հաղպատի վանք
- գ. Սաղմոսավանք, Հոռոմոսի վանք, Հաղպատի վանք

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

- ա. Հովսեփ Ա, Սմբատ Բ, Բաբկեն Ա
- բ. Ներսես Ա, Սահակ Ա, Հուսիկ Ա
- գ. Կոմիտաս Ա, Գյուտ Ա, Հեթում Բ

N 16

16.1 Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. (2 x 0.5 = 1 միավոր)

- 1) Տիրան թագավորի հրամանով բրածեձ են անում Ս. Հուսիկ կաթողիկոսին:

- 2) Ս. Հուսիկ կաթողիկոսը եկեղեցական արարողություններից մեկի ժամանակ արգելում է արքային մտնել եկեղեցի:
- 3) Ս. Հուսիկ կաթողիկոսը թաղվում է Աշտիշատ գյուղում:
- 4) Չնայած լարվածություններին՝ Արշակունիները չէին խոչընդոտում Հայոց եկեղեցու գործունեությանը:
- 5) Չնայած Ս. Տրդատ Մեծի ջանքերին՝ Աղվանքի թագավորը մնում է հեթանոս, բայց մեծ արտոնություններ է տալիս քրիստոնյաներին:

16.2 Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. (2 x 0.5 = 1 միավոր)

- 1) Չնայած առկա բազմաթիվ տարակարծությունների՝ Կիլիկյան արքունիքի և Հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները միշտ խաղաղ են եղել:
- 2) 1203 թ. Կիլիկյան արքունիքի առաջարկով կաթողիկոս ընտրվեց Հռոմկլայի Հովհաննես արքեպիսկոպոսը:
- 3) Դիվանագիտական նկատառումներից ելնելով Կիլիկյան արքունիքը երբեմն զիջումներ էր կատարում հռոմեական կամ հունական եկեղեցիներին:
- 4) Սսի հայոց կաթողիկոսները որդեգրեցին «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը:
- 5) Կիլիկյան արքունիքը պարբերաբար փորձում էր վերահսկողություն սահմանել Հայոց կաթողիկոսության գործունեության նկատմամբ:

N 17

Խնդիր-առաջադրանք 4 հարցից (4 x 0.5 = 2 միավոր)

- 1) Ինչու՞ կաթողիկոսական աթոռը Հռոմկլայից տեղափոխվեց Սիս:
- 2) Ի՞նչ փոփոխություններ էին ուզում անել Հայոց թագավորը և կաթողիկոսը պապականությունից և Բյուզանդիայից օգնություն ստանալու ակնկալությամբ:
- 3) Ի՞նչ է նշանակում Սրբազան ավանդություն:
- 4) Ինչպե՞ս վարվեց Օշին թագավորը 1317 թ. Ադանայի ժողովի որոշումների դեմ բողոքողների նկատմամբ: